Երկրորդ ընթերցում
ՆԱԽԱԳԻԾ

Կ-938-21.01.2016,25.02.2016-ՊԱ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի մարտի 31-ի ՀՕ-60-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածում՝

1) 1-ին մասից հանել «զինվորական» բառը.

2) 1-ին մասը «համալրված» բառից հետո լրացնել «փրկարարական ծառայողներով,» բառերով:

Հոդված 2. Օրենքի 5-րդ հոդվածը լրացնել նոր 4-րդ եւ 5-րդ կետերով՝

«4) մասնակցությունը տարածքային պաշտպանությանը, այդ թվում՝ իրենց լիազորությունների շրջանակներում սահմանամերձ տարածքներում հակառակորդի դիվերսիոն հետախուզական խմբերի դեմ պայքարին, մարտական գործողությունների եւ զենքի կիրառման հետեւանքներից բնակչության, կապտաժների, կամուրջների ու այլ կարեւորագույն նշանակության օբյեկտների պաշտպանությանն ու պահպանությանը.

5) «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին», «Պաշտպանության մասին», «Քաղաքացիական պաշտպանության մասին», «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին», «Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված այլ լիազորությունների իրականացումը:»:

Հոդված 3. Օրենքի 6-րդ հոդվածում «պաշտպանության բնագավառի» բառը փոխարինել «քաղաքացիական պաշտպանության բնագավառի» բառով:

Հոդված 4. Օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասում՝

1) «բժշկական սպասարկումն» բառերը փոխարինել «բժշկական օգնությունը եւ սպասարկումն» բառերով.

2) «առողջապահական կազմակերպությունները» բառերը փոխարինել «լիազորված մարմնի եւ այլ բժշկական օգնություն ու սպասարկում իրականացնող հաստատությունները» բառերով:

Հոդված 5. Օրենքի 10-րդ հոդվածում «զինծառայողները» բառը փոխարինել «փրկարարական ծառայողները» բառերով:

Հոդված 6. Օրենքի 11-րդ հոդվածում՝

1) «զինծառայողներ» բառերը, համապատասխան հոլովաձեւերով, փոխարինել «փրկարարական ծառայողներ» բառերով.

2) 3-րդ մասից հանել «զինվորական» բառը:

Հոդված 7. Օրենքի 14-րդ հոդվածում՝

1) վերնագիրը «կիրառումը» բառից հետո լրացնել «քաղաքացիական պաշտպանության միջոցառումներին եւ փրկարարական աշխատանքներին մասնակցությունը» բառերով.

2) «ուժերի» բառից հետո լրացնել «, փրկարարական ծառայության» բառերով.

3) լրացնել նոր մասերով՝

«Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների պահակային ծառայությունը կազմակերպվում եւ իրականացվում է Հայաստանի Հանրապետության զինված ուժերում պահակային ծառայությունը սահմանող իրավական ակտերին համապատասխան:

Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումներում պահակային ծառայությունը կարող է կազմակերպվել նաեւ ռազմականացված կամ ոչ ռազմականացված պահակային ստորաբաժանումների՝ փրկարարական ծառայության մեջ չգտնվող անձանց միջոցով: Ռազմականացված պահակային ստորաբաժանումներում պահպանությունն իրականացվում է ծառայողական զենքով՝ քաղաքացիական պաշտպանության բնագավառի լիազորված մարմնի ղեկավարի հրամանով սահմանված կարգով: »:

Հոդված 8. Օրենքի 15-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «զինծառայողներից» բառերը փոխարինել «փրկարարական ծառայողներից» բառերով.

2) 2-րդ մասի «զինծառայողներին շնորհվում են զինվորական կոչումներ՝ «Զինվորական ծառայություն անցնելու մասին»» բառերը փոխարինել «փրկարարական ծառայողներին շնորհվում են փրկարարական կոչումներ՝ «Փրկարար ծառայության մասին»» բառերով.

3) 3-րդ մասի «զինծառայողները կրում են Հայաստանի Հանրապետության զինված ուժերի միասնական համազգեստ, զինվորական կոչումներ» բառերը փոխարինել «փրկարարական ծառայողները կրում են փրկարարական ծառայության համազգեստ, փրկարարական կոչումներ» բառերով.

4) 4-րդ մասի «զինվորական ծառայությունն» բառերը փոխարինել «փրկարարական ծառայությունն» բառերով.

5) 5-րդ մասի «զինվորական» բառը փոխարինել «փրկարարական» բառով:

Հոդված 9. Օրենքի 16-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ՝

«Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների համալրումը փրկարարական ծառայողներով, ռազմականացված կամ ոչ ռազմականացված պահակային ստորաբաժանումների քաղաքացիական անձնակազմով ու տեխնիկական սպասարկում իրականացնող անձանցով իրականացվում է «Փրկարար ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:».

2) 2-րդ մասի «զինվորական ծառայությունը կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կանոնագրքերով» բառերը փոխարինել «փրկարարական ծառայությունը կազմակերպվում է փրկարարական ծառայության կանոնագրքերով» բառերով.

3) 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝

«Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների համալրման վիճակի եւ որակի, ստորաբաժանումներում փրկարարական ծառայողների տեղաբաշխման, ծառայության կրման ու կազմակերպման պատասխանատվությունը կրում է լիազորված մարմնի ղեկավարը:»:

Հոդված 10. Օրենքի 17-րդ հոդվածում ««Զինվորական ծառայություն անցնելու մասին»» բառերը փոխարինել ««Փրկարար ծառայության մասին»» բառերով:

Հոդված 11. Օրենքի 18-րդ հոդվածում՝

1) վերնագրում «զինծառայողների զինվորական ծառայության» բառերը փոխարինել «փրկարարական ծառայողների» բառերով.

2) 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ՝

«Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների փրկարարական ծառայողները պարտականությունները կատարում են «Փրկարար ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով եւ փրկարարական ծառայության կանոնագրքերով սահմանված կարգով:»:

3) 2-րդ մասի «զինծառայողների» բառը փոխարինել «փրկարարական ծառայողների» բառերով:

Հոդված 12. Օրենքի 4-րդ գլխի վերնագրում, 19-րդ հոդվածի վերնագրում եւ ողջ տեքստում «զինծառայողներ» բառը, համապատասխան հոլովաձեւերով, փոխարինել «փրկարարական ծառայողներ» բառերով.

Հոդված 13. Օրենքի 20-րդ հոդվածում՝

1) վերնագրում եւ տեքստում «զինծառայողների» բառերը փոխարինել «փրկարարական ծառայողների» բառերով.

2) ««Զինծառայողների եւ նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին»» բառերը փոխարինել ««Փրկարար ծառայության մասին»» բառերով, իսկ ««Հայաստանի Հանրապետության զինված ուժերի զինծառայողների» բառերը փոխարինել «փրկարարական ծառայողների» բառերով:

Հոդված 14. Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերում «ռազմական» բառերից հետո լրացնել «, փրկարարական» բառերով:

Հոդված 15. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

««Փրկարար ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների

Առաջար-կության հեղինակ	Առաջարկության բովանդակությունը	Եզրակա-ցություն	Կատարված փոփոխությունները
ՀՀ ԱԺ պատ-գամա-վոր Գ, Մելիքյան	«Փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով՝		
	1 Նախագիծը լրացնել նոր 9-րդ հոդվածով՝ հետևյալ բավանդակությամբ՝ «**Հոդված 9.** Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասում «30» թիվը փոխարինել «40» թվով:»	1. Ընդունվել է մասամբ	1. Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված մինչև 30 տարեկան տարիքային շեմը բարձրացնելու նպատակով Նախագիծը լրացվել է նոր 9-րդ հոդվածով՝ հետևյալ բավանդակությամբ «***Հոդված 9.*** **Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «30» թիվը փոխարինել «35» թվով:** »
	2 10-րդ հոդվածը լրացնել նոր մասով՝ հետևյալ բավանդակությամբ. «Օրենքի 32-րդ հոդվածի 4.9-րդ մասից հանել «, առնվազն միջնակարգ կրթություն ունեցող» բառերը:»	2. Ընդունվել է մասամբ	2. Նախագծի 11-րդ հոդվածը լրացվել է նոր 3-րդ մասով «**3. 9-րդ մասը «առնվազն միջնակարգ կրթություն ունեցող» բառերից հետո լրացնել «(բացառությամբ քաղաքացիական պաշտպանության ստորաբաժա-նումներում ծառայության ընդունվողների)» բառերը.** »